## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԼՐԱԿԱԶՄԻ ԱՄՓՈՓՈԳԻՐ

| Թերթ | Անվանում | Ծանուցում |
|---|---|---|
| 1 | Ընդհանուր տվյալներ | Գ - 1 |
| 2 | Գլխավոր հատակագիծ գազատար ցանցի անցկացումով Մ1:500 | Գ - 2 |
| 3 | Գազատար ցանցի անցկացման պրոֆիլ | Գ - 3 |
| 4 | Աշխատանքային ծավալներ, հենարաններ | Գ - 4 |

## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

| Նշանակում | Անվանում |
|---|---|
|  | Գոյություն ունեցող ցածր ճնշման գազատար |
|  | Նախագծվող ցածր ճնշման գազատար |
|  | Փական |
|  | Գազահաշվիչ պահարանով |

## ՄԵՋԲԵՐՎԱԾ ԵՎ ԿՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑՈՒՑԱԿ

| Նշանակում | Անվանում | Ծանոթագրություն |
|---|---|---|
| | Կցվող փաստաթղթեր | |
| | Տեխնիկական պայմաններ | 2 թերթ |

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ

Տավուշի մարզի Նավուր գյուղի մանկապարտեզի շենքի ջերմամատակարարման համար նախատեսված կաթսաների գազամատակարարման արտաքին ցանցի նախագիծն իրականացված է Հ.Հ. օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, նախագծման նորմերին ու կանոններին և նախագծային առաջադրանքին համապատասխան:

Նախագիծը կատարված է Տավուշի ԳԳՄ-ի 25.11.2015թ առաջադրված տեխնիկական պայմաններին համաձայն:

Գազի մաքսիմալ ծախսը կազմում է 8.0 մ³/ժամ:

Գազամատակարարումն իրականացվում է վերգետնյա d=108մմ ցածր ճնշման գազատարից:

Ցածր ճնշման dy32մմ տրամագծով գազատարն անց է կացվում վերգետնյա մետաղական հենասյուների վրայով և մոտեցվում ջերմային հանգույցում տեղադրված կաթսաներին: AG 75-10 գազահաշվիչով պահարանը տեղադրվում է ցանկապատի մոտ հենարանի վրա:

Ցածր ճնշման գազատարը նախատեսվում է իրականացնել պողպատյա ջրագազային և էլեկտրաեռակցված խողովակներով:

Գազատարը կոռոզիայից պաշտպանելու համար յուղաներկվում է 2 անգամ:

Փորձարկումից առաջ խողովակները պետք է ենթարկվեն փչամաքրման:

Անհրաժեշտ է գազատարը փորձարկել պնևմատիկորեն՝ ամրությունը և կիպությունը ստուգելու համար:

Հավաքակցումը, փորձարկումը, շահագործման հանձնումը և շահագործումը կատարել համապատասխան գործող նորմերի և կանոնների

- ՀՀՇՆ IV-12.03.01-04:
- Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում:

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագրի առաջադրանք՝ TTV-05 | | | | Նավուր գյուղի մանկապարտեզի կառուցում | | | |
| | | | | Գազամատակարարման արտաքին ցանց | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| | | | | | ԱՆ | Գ-1 | 4 |
| Նախագծ. | Հ. Ղուկասյան | | | Ընդհանուր տվյալներ | ԻՆԺԻՆԵՐԻՆԳ ԷՎՐՈՍ ՍՊԸ | | ENGINEERING EVROS LLC |
| Պաշտոն | Ազգանուն | Ստորագր. | | | | | |